ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Եգիպտահայ դաղութը ստեղծել է թվով և որակով բավական ուշագրավ պարբերականներ։ Դրանց պատմության ուսումնասիրության բնագավառում մինչև օրս կատարված աշխատանքը սարդ ցուցակագրումից այն կողմ գրեթե չի անցել։ Առաջինը ձեռնամուխ լինելով եգիպտահայ պարբերական մամուլի հետազոտմանը, Մ. Պոտուրյանը կազմել է 1865—1905 թթ. Եգիպտոսում լույս տեսած հայկական լրագրերի և հանդեսների ցուցակը՝ «Եգիպտահայ լրագրության քառասնամյա պատմությունը»[1], որն ընդգրկում է 14 անուն։ 1913 թ. Վահան Պալյանը կազմել է երկրորդ ցուցակը՝ «Եգիպտահայ լրագրությունը»[2], որը զգալի չափով ավելի ընդարձակ է (31 անուն), քան առաջինը։ Երրորդ ցուցակը՝ «Հայ լրագրություններ Եգիպտոսի մեջ 1865—1932»[3], կազմել է Վահան Զարդարյանը, թվարկելով 64 անուն պարբերականներ։ Այդ ցուցակները զգալի չափով պակասավոր են և պարունակում են բազմաթիվ սխալներ։ Անքննադատաբար օգտագործելով դրանք, Հովհ. Պետրոսյանն իր «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ում համարյա նույնությամբ կրկնել է դրանցում տեղ գտած սխալները։ Ռ. Շահլամյանի վերջերս հրատարակած նոր ցուցակը՝ «Եգիպտահայ մամուլը 100 տարում»[4], չէր կարող իր նախորդների թերություններից զերծ լինել, քանի որ այն մեծ մասամբ կազմված է Հովհ. Պետրոսյանի տվյալներով։ Բավական է նշել, որ նրա ցուցակի 96 անուններից 72-ը բերված են վերջինիս «Բիբլիոգրաֆիա»-ից, հաճախ նույնությամբ, երբեմն էլ անհարկի կրճատումներով և անճիշտ լրացումներով։

Ստորև մի շարք ուղղումներ և լրացումներ ենք անում վերոհիշյալ ցուցակներում հիշատակված այն պարբերականների կապակցությամբ, որոնք անձամբ տեսել ենք, և նրանց հրատարակչական ցուցանիշները՝ վերնագիր, ենթավերնագիր, տարեթիվ, խմբագիր, արտոնատեր, տպարան, ծավալ և այլն, ուղղակի վերցրել ենք համապատասխան խմբագրության կատարած նշումներից։ Ուղղումներ և լրացումներ կատարել ենք նաև մի ուրիշ խումբ պարբերականների հետ կապված հարցերում, օգտագործելով նրանց ժամանակակից մամուլի հաղորդումները, ինչպես նաև արխիվային վավերագրերում պահպանված տվյալներ, որոնց հավաստիությունը, մեր կարծիքով, չի կարող կասկածի ենթարկվել։ Վերջում ներկայացնում ենք մի շարք պարբերականներ, որոնք դուրս են մնացել Ռ. Շահլամյանի ցուցակից։

Արմավենի։ Լրագիր կիսամսյա քաղաքական, ազգային և բանասիրական։ Կահիրե, 1865 թ.։ Խմբագիր՝ Աբրահամ Մուրատյան, արտոնատեր՝ Հովսեփ Մանուկյան։ Մ. Պոտուրյանը Մուրատյանին համարում է եգիպտահայ անդրանիկ պարբերականի «հիմնադիրն ու խմբագիրը», իսկ Վ. Պալյանը նրա «տեր-տնօրեն-խմբագիրը»։ Դա բացահայտ չափազանցություն է։ «Արմավենի»-ի իսկական հիմնադիրը և տերը Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ Մկրտիչ Քեֆսիզյանն էր և նրա «տնօրինությունը» հանձնված էր Կահիրեի Խորենյան ազգային դպրոցի հոգաբարձությանը[6], որի ատենապետ

---

1 «Բազմավեպ», 1907, էջ 73—77։

2 «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 148—155։

3 «Արև», Կահիրե, 26 մարտի 1932։

4 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 296—300։ Բացի գրանցից մի ցուցակ ևս հրատարակել է Հարություն Մանավյանը, բայց այն չի կարող ուշադրության արժանանալ, քանի որ արտագրված է Վահան Զարդարյանի ցուցակից («Մարկավագին Եգիպտահայ տարեցույցը», 1933, էջ 36—38)։

5 Աստղանիշ կրող պարբերականները տեսել ենք, իսկ մյուսների համար ցույց ենք տալիս աղբյուրը, որտեղից տեղեկանք ենք վերցրել։

6 «Արշալույս Արարատյան», 17 ապրիլի 1865։ Այդ լրագրում ասված է. «Այս լրագրույն հիմնադրությունը Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ գեր. տեր Մկրտիչ արքեպիսկոպոսին ազգասիրական ջանից ու հորդորանաց արդյունքն է։ Ն. ս. կարգագրության համեմատ «Արմավենիին» տնօրենությունը Կահիրեի դրպրոցի մեծարգո հոգաբարձությանը հանձնվեր է, և անոր խմբագիր կարգվեր է հարգո Ա. Մուրատյանը» (նույն տեղում)։

Հ. Մանուկյանը ստորագրում էր լրագրի համարները։ Իսկ Մուրատյանը, որը միաժամանակ Խորենյան դպրոցի տնօրենն էր, այդ հոգաբարձության պաշտոնյայի հանգամանքով խմբագրում էր լրագիրը։ Ոչգրված չէ նաև, թե «Արմավենի»-ն քանի՞ համար է լույս ընծայվել։ Պոտուրյանը, որը տեսել է նրա «առաջին երկու թիվերը», գրում է. «Այլևս չերևցավ նա»։ Իսկ Վ. Պալյանը և, ակներևորեն սրանից վերցնելով, Ա. Ալպոյաջյանը նշում են, որ «Արմավենի»-ն տևել է «քանի մի ամիս»[7], 1898 թվակիր արխիվային մի վավերագրում պարզ ասված է, որ այդ լրագիրը հրատարակվել է ընդամենը «երեք» համար՝ առաջինը՝ 1865 թ. մարտի 16-ին, երկրորդը ապրիլի 1-ին, երրորդ և վերջինը՝ ապրիլի 16-ին։ Խոսելով «Արմավենի»-ի դադարելու մասին, Ա. Ալպոյաջյանը որպես պատճառ առաջ է քաշում Մուրատյանի առողջական վիճակը, իսկ Վ. Զարդարյանը՝ խոլերայի համաճարակը։ Դրանք, իհարկե, չեն համապատասխանում իրականությանը։ Ժամանակակից մամուլի հաղորդումներից երևում է, որ 1865 թ. մարտ-ապրիլ ամիսներին, այսինքն լրագրի հանդես գալու ժամանակաշրջանում, իրենց բարձրակետին էին հասել ժողովրդական ելույթները Քեֆսիզյանի և հակասահմանադրական ջոջերի դեմ, ելույթներ, որոնք հանգեցրին «Քեֆսիզյանի «գանակոծման» և մի շարք «խրոովարարների» բանտարկությանը։ Եգիպտահայ ջոջերի և հատկապես Նուբար փաշայի ստիպումով Քեֆսիզյանը հեռացավ Եգիպտոսից[10]։ Այդ պայմաններում, իհարկե, նրա «ձեռնտվությամբ» ստեղծված լրագիրը չեր կարող շարունակել իր գոյությունը։

Ն ե ղ ո ս։ Շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1889 թ.։ Խմբագրական մարմին՝ Անտոն Ռշտունի, Ղևոնդ ք. Փափազյան և Վահան Մամասյան։ Վ. Պալյանի ասելով «Նեղոս»-ը լույս է տեսել 1887 թ., իսկ Ռ. Շահլամյանը («սրբագրելով» Պետրոսյանին) նշում է 1888—1889 թթ.։ Այդ թվականները ճիշտ չեն։ Սխալվում են նաև Վ. Զարդարյանը և Ա. Ալպոյաջյանը, երբ դրում են, որ այդ շաբաթաթերթը լույս է տեսել «միայն հինգ թիվ»[11]։ Այդ հեղինակները այնքան անքննադատ են վարվել, որ մինչև անդամ չեն նկատել, որ իրենցից առաջ ուրիշ հեղինակներ անդրադարձել են այդ հարցերին և տվել ճիշտ պատասխան։ Ընդգծելով, որ ինքը տեսել է «Նեղոս»-ի առաջին վեց համարները, Մ. Պոտուրյանը հավաստում է, որ նրա առաջին համարը լույս է ընծայվել 1889 թ. հունվարի 2-ին (նոր տոմարով)։ Նույնը հաստատում է նաև Գ. Լևոնյանը և ավելացնում, որ «Նեղոս»-ը ունեցել է «չորս ամիս կյանք»[12]։ Պոտուրյանի և Լևոնյանի օգտին է խոսում 1898 թվակիր արխիվային մի վավերագիր, որտեղ ասված է, որ «Նեղոս»-ը լույս է տեսել «ընդամենը 18» համար[13]։ «Նեղոս»-ը հրատարակվել է սկսել 1889 թ. հունվարի սկզբին և անխափան շարունակվել մինչև այդ թվականի ապրիլի վերջերը, մինչև Անտոն Ռշտունու բանտարկվելը[14]։ Մի ուրիշ բավական լուրջ սխալ թույլ է տվել Ռ. Լեոնյանը։ Նա, չգիտես ինչից ելնելով, Անտոն Ռշտունուն և Ղևոնդ ք. Փափազյանին համարում է միևնույն անձը. («Անտոն Ռշտունին, որ նույն է Ղևոնդ քհնյ. Փափազյան» կամ՝ «Եգիպտոսից Կալաց փոխադրվելով «Նեղոսի» խմբագիր Անտոն Ռշտունին կամ Ղևոնդ քհնյ. Փափազյանը...»)[15]։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Մինչ Ղ. ք. Փափազյանը Եգիպտոսից արտաքսվեց, Ռշտունին մնաց այնտեղ, բանտից դուրս գալով շարունակեց պայքարել ազգային ջոջերի դեմ։ Նրա մասին բազմաթիվ հաղորդումներ կան մինչև առաջին համաշխարհային պատերազմը Եգիպտոսում լույս տեսած հայկական մամուլի էջերում։ Նրան հանդիպում ենք Երվանդ Օտյանի և Վահան Թեքեյանի գլխավորած

7 Ա. Ա լ պ ո յ ա ջ յ ա ն, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 295։

8 ԴԱԹ արխիվ, Ֆ. Թ. Ազատյաս, ր. 12, վ. 9432։

9 «Արշալույս Արարատյան», 20 մարտի 1865։

10 Նույն տեղում, 11 դեկտեմբերի 1865։

11 Ա. Ա լ պ ո յ ա ջ յ ա ն, նշվ. աշխ., էջ 274.

12 Ռ. Լ և ո ն յ ա ն, Հայ պարբերական մամուլը, էջ 524։

13 ԴԱԹ արխիվ, Ֆ. Թ. Ազատյան, ր. 12, վ. 9432։

14 Եգիպտահայ ջոջերը, որոնք դժգոհ էին «Նեղոս»-ի հակաթուրքական ուղղությունից, արեցին ամեն ինչ այն խափանելու համար։ Նրանց պահանջով եգիպտական ոստիկանությունը Ղ. ք. Փափազյանին բռնադատեց Պոլիս մեկնել, սակայն նրան հաջողվեց Պիրեայում (Հունաստան) նավից դուրս գալ և անցնել Կալաց...։ (Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 143—144)։ Այդ բանից հետո ժողովուրդը բողոքի ցույց կազմակերպեց ազգային ջոջերի դեմ և պահանջեց թեմական առաջնորդ Իզմիրլյանի հրաժարականը։ Ցույցի պարագլուխները, այդ թվում Անտոն Ռշտունին, ձերբակալվեցին, դատվեցին և բանտարկվեցին («Արմենիա», 27 ապրիլի 1889)։

15 Գ. Լ և ո ն յ ա ն, Հայ գիրը և տպագրական արվեստը, էջ 242։

սահմանադրական պայքարի աշխույժ մասնակիցների շարքերում[16], «Նեղոս»-ը շարվում էր Ղ. ք. Փափազյանի տառերով և տպագրվում Միզրահիի տպարանում։

• Փարոս[17]: Լրագիր ազգային, գրական և քաղաքական։ Կահիրե։ «Փարոս»-ը ունեցել է երկու շրջան, առաջինը՝ 1897—1898 թթ., երկրորդը՝ 1901—1902 թթ.։ Տնօրեն-խմբագիր՝ Հարություն Ալփիարը։ Ծավալը՝ 4 էջ (50×33 սմ.)։ Ակներևորեն, Հովհ. Պետրոսյանը Պալյանի ցուցակից, իսկ Դ. Շահլամյանը՝ Պետրոսյանի «Բիբլիոգրաֆիա»-ից վերցնելով նշում են, որ «Փարոս»-ի առաջին շրջանը սկսվել է 1896 թ. և վերջացել 1898 թ., մի բան, որ սխալ է։ «Փարոս»-ի առաջին շրջանի առաջին համարը լույս է տեսել 1897 թ. մայիսի 21-ին, իսկ վերջինը՝ 1898 թ. մայիսի 25-ին։ Կահիրեից Պոլիս գրված 1898 թ. մայիսի 26-ի թվակիր մի նամակում ասված է. «Երեկ լրագրի («Փարոսի»—Հ. Թ.) վերջին թիվն լույս տեսավ, որով ա. տարին կվերջանա. մտադիր չեն ր. շրջանն հրատարակել զի վնասով կելնե եզեր ընդամենը 178 բաժանորդ ունենալուն համար»[18]։ Մի ուրիշ նամակում (28 հունիսի 1898) կարդում ենք. «...Լրագիրն հավետ խափանված է, վերջին թիվն էր 101 կիսաթերթն, և տպարանն այլում 20 ոսկու ծախված...»[19]։ «Փարոս»-ի երկրորդ շրջանը սկսվում է 1901 թ. սեպտեմբերի 19-ից և շարունակվում մինչև 1902 թ. կեսերը։ Կահիրեի «Արշալույս» լրագրի № 291-ում (1902 թ. հունիս) «Փարոս»-ը հիշատակված է լույս տեսնող պարբերականների թվում։ Նրա տնօրեն-խմբագիրը նորից Հ. Ալփիարն էր, որը ավելի քան երկամյա բացակայությունից հետո վերադարձել էր Եգիպտոս։ Վ. Պալյանը «Փարոս»-ը համարում է երկօրյա, իսկ Մ. Պոտուրյանը, Հովհ. Պետրոսյանը և ուրիշներ՝ եռօրյա լրագիր։ Իրականում «Փարոս»-ը առաջին շրջանում եղել է եռօրյա, լույս է տեսել չորեքշաբթի և շաբաթ օրերը, իսկ երկրորդ շրջանում՝ երկօրյա, լույս է տեսել երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը։ Առաջին շրջանում «Փարոս»-ը շարվում էր սեփական տառերով և տպագրվում ուրիշի տպարանում։ Ոչինչ հայտնի չէ նրա երկրորդ շրջանի տպարանական պայմանների մասին։

Լրաբեր: Ամենօրյա լրագիր (խմորատիպ)։ Ալեքսանդրիա, 1897—1908 թթ.։ Խմբագիր՝ Գրիգոր Սարաֆյան։ Այս լրագրի տարեթվերի մասին կան իրարամերժ տեղեկություններ։ Մ. Պոտուրյանը նշում է, որ այդ լրագիրը «կարճատև կյանք մը» ունեցել է, բայց ոչինչ չի ասում նրա հիմնադրման և դադարման թվականների մասին։ Հովհ. Պետրոսյանը չգիտես ինչ հիման վրա դրում է, որ այդ լրագիրը սկզբնավորվել է 1901 թ.։ Մեր կարծիքով ընդունելի պետք է համարել «Հանդես ամսօրյա»-ի հաղորդումը, որտեղ խոսվում է «Լրաբեր»-ի 1897 թ. հիմնադրվելու մասին[20]։ Նույն թվականն է առաջարկում նաև Վ. Պալյանը։ Որքա՞ն կյանք է ունեցել այդ լրագիրը։ Այդ հարցին Վ. Պալյանը պատասխանում է՝ «բավական երկար ժամանակ»։ Համենայն դեպս կան անժխտելի փաստեր, որոնք ցույց են տալիս, որ «Լրաբեր»-ը շարունակում էր լույս տեսնել 1903 թ.[21], ինչպես նաև 1906 թ.[22], դադարել է հավանաբար 1908 թ.։

• Փյունիկ: Ազգային, գրական և քաղաքական հանդես։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ (Տեր-Ղազարենց), արտոնատեր՝ Ժյուլ Մյունիե[23]։ «Փյունիկ»-ը ունեցել է երկու շրջան, առաջինը՝ 1899 թ. Կահիրեում, երկրորդը՝ 1901—1903 թթ. Ալեքսանդրիայում։ Համարյա բոլոր ցուցակներում նշված է, որ «Փյունիկ»-ի առաջին շրջանը տևել է 1899—1900 թթ.։ Դա, իհարկե, հիշտ չէ։ Բացի այդ, ոմանք այն համարում են կիսամսյա, ուրիշները՝ շաբաթաթերթ և այլն։ Առաջին շրջանում՝ 1899 թ. ապրիլի 1-ից մինչև նույն թվականի հոկտեմբերը ներառյալ «Փյունիկ»-ը եղել է կիսամսյա հանդես, լույս է տեսել ընդամենը 14 համար, ծավալը՝ 16 էջ (28×20 սմ.)։ Առաջին երկու համարները տպագրվել են Ս. Դարբինյանի, իսկ մնացյալները՝ Մնտիկյանի տպարանում։ Որ իրոք «Փյունիկ»-ը 1899 թ. նոյեմբերի սկզբին դադարել է, այդ մասին վկայում է ինքը՝ Սմբատ Բյուրատը, մամուլում գետեղած հատուկ հայտարարությամբ, որտեղ ասված է. «Փյունիկ»-ը դադրած է անցյալ նոյեմբերի սկիզբեն... Մնտիկ-

16 «Ազատ խոսք», 1906, տետր 6, էջ 87։

17 Տեսել ենք միայն «Փարոս»-ի առանձին համարներ։

18 ԳԱԹ արխիվ, Ֆ. Թ. Ագատյան, ր. 12, վ. 9441։

19 Նույն տեղում, վ. 9444։

20 «Հանդես ամսօրյա», 1903, էջ 224։

21 Պոտուրյանը եգիպտահայ «Փեթակ» շաբաթաթերթի 1903 թ. 2-րդ համարում տեսել է տեղեկանք այդ թվականին «Լրաբեր»-ի լույս ընծայվելու մասին։

22 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 372։

23 Եգիպտոսում ապրող ֆրանսիացի հայասեր մտավորական, որը տարիներ շարունակ գործակցել է Սմբատ Բյուրատի հետ։

ան տպարանի հանկարծակի փակումով»[24], Երկրորդ շրջանում՝ 1901 թ. հունիսի 8-ից մինչև 1903 թ. հուլիսը, «Փյունիկ»-ը վերահրատարակվում է Ալեքսանդրիայում, նախ որպես շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա և վերջում՝ օրաթերթ։ Այս շրջանում «Փյունիկ»-ը տպագրվում էր նախ «Արաքս», ապա «Սիսվան» տպարանում։

• Արշալույս։ Ազգային, գրական և քաղաքական անկախ հայաթերթ։ Կահիրե։ Ըստ Վ. Պալյանի «Արշալույս»-ը շաբաթաթերթ է, իսկ Հովհ. Պետրոսյանի և ուրիշների համար այն պարզապես լրագիր է։ Առաջին շրջանում՝ 1899 թ. օգոստոսից մինչև 1905 թ. ապրիլը «Արշալույս»-ը եղել է եռօրյա լրագիր, երկրորդ շրջանում՝ 1908 թ. հունվարի 1-ից մինչև 1914 թ. սկիզբը՝ շաբաթաթերթ, իսկ 1905—1907 թթ. լույս չի տեսել, ինչպես նշում է լրագրի խմբագրությունը[25]։ Դ. Շահլամյանի կարծիքով այդ երկու շրջանները սահմանազատված են այսպես. «1899—1905 և 1901—1914»։ Նա այն աստիճան անքննադատաբար է կրկնել Հովհ. Պետրոսյանին, որ մինչև անգամ չի նկատել նրա տարեթվերում սպրդած վրիպակը, որի հետևանքով 1908-ը վերածվել է 1901-ի։ Վ. Պալյանը Եղիշե Թորոսյանին համարում է «Արշալույս» լրագրի «հիմնադիր-տնօրեն-խմբագիրը»։ Իսկ Հովհ. Պետրոսյանի ասելով «Արշալույս»-ը ունեցել է երկու խմբագիր՝ Եղ. Թորոսյանը և Գեորգ Փափազյանը։ Սկզբնական շրջանում Թորոսյանը լրագրի «տեր և տնօրենն» էր, իսկ հետագայում, երբ թերթը դարձավ Ազգային անկախ միության օրգանը, հանդես եկավ որպես «խմբագրության ներկայացուցիչ»[26]։ Գեորգ Փափազյանը եղել է ոչ թե խմբագիր, այլ «վարչական» գործերի պատասխանատու[27]։ 1911 թ. նրան այդ պաշտոնում փոխարինել է Շահեն Հաճեթյանը։ «Արշալույս»-ը սկզբում տպագրվում էր Ս. Դարբինյանի, հետագայում՝ սեփական համանուն տպարանում։ 1900 թ. ապրիլի 16-ի թվակիր արխիվային մի վավերագրում ասված է։ «[Թորոսյանը] վերջապես հաջողեցավ ժողովրդական [հանգանակությամբ—Հ. Թ.] տպարան մի հիմնել»[28]։ Ծավալը եղել է 4 էջ, բայց նրա էջերի չափսերը հաճախ փոխվել են։

Նոր օր։ Լրագիր ազգային, բանասիրական և քաղաքական։ Կահիրե։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ, ապա Սմբատ Փափազյան, արտոնատեր՝ Ժյուլ Մյունիե։ Վ. Պալյանը և Գ. Զարդարյանը այն համարում են երկօրյա, իսկ Հովհ. Պետրոսյանը և ուրիշներ բավականանում են պարզապես այն լրագիր անվանելով։ Իրականում «Նոր օր»-ը եղել է եռօրյա լրագիր, լույս էր տեսնում «շաբաթն երկու անգամ»[29]։ Մ. Պոտուրյանն էլ, որը տեսել է «Նոր օր»-ի առանձին համարներ, այն անվանում է «կիսաշաբաթաթերթ»։ Ե՞րբ է հիմնադրվել «Նոր օր»-ը. այդ հարցին Պոտուրյանը պատասխանում է. «1900-ի հունիսին»։ Այդ անհիմն տեղեկությունն էլ ցուցակից ցուցակ անցնելով հասել է մինչև մեզ։ Եթե Պոտուրյանի հաստատումը ճիշտ լիներ, ապա Սմբատ Բյուրատը չեր կարող «Նոր օր»-ի առաջին շրջանի խմբագիրը լինել (այն, ինչ հաստատ է), քանի որ նա 1900 թ. սկզբներից այլևս Կահիրեում չէր. «յուր կույր կնոջ և երկու տղաքներուն հետ Բորթ-Սաիդ փախավ. ուրկե Կիպրոս պիտի անցներ, բայց Աղեքսանդրիա ելեր է»[30]։ Երկրորդ՝ հիշյալ վավերագրում «Նոր օր»-ի մասին ասված է. «Ցարդ (մինչև 1900 թ. ապրիլի 16-ը—Հ. Թ.) 60 թիվ լույս տեսած է»[31]։ Եթե «Նոր օր» եռօրյա լրագիրը առանց հապաղումների լույս ընծայվեր, ապա պետք է հիմնադրված լիներ 1899 թ. սեպտեմբերին, բայց այդպես չի եղել, նրա առաջին տարեշրջանը փակվել է 104-ի փոխարեն 95 համարով։ Ուստի կարող ենք հետևցնել, որ այն հիմնադրվել է այդ թվականի նոյեմբերին, այսինքն «Փյունիկ»-ի դադարումից անմիջապես հետո։ Այդպիսով հասկանալի է դառնում նաև այն, որ Ս. Բյուրատը և Ժ. Մյունիեն (դադարած «Փյունիկ»-ի խմբագիրն ու արտոնատերը) ձեռնամուխ են լինում «Նոր օր»-ի հրատարակությանը։ «Նոր օր»-ը սկզբում տպագրվում էր Ս. Դարբինյանի, ապա՝ Թորգոմ Փափազյանի տպարանում։ «Նոր օր»-ը կազմում էր Կահիրեի լսարան-ընթերցարանի իրավական սեփականությունը, այն զոհ գնաց այդ հաստատության ներքին տարաձայնություններին, փակվեց 1901 թ. կեսերին։

• Ազատ խոսք։ Պարբերաթերթ։ Խմբագիր՝ Երվանդ Օտյան։ Այս պարբերականը համարյա բոլոր ցուցակներում ներկայացված է ոչինչ չասող տվյալներով, չնայած որ այն նշանակալից տեղ է գրավում եգիպտահայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Հովհ. Պետրոսյանը և

---

24 «Արշալույս», Կահիրե, 30 դեկտեմբերի 1899։

25 Նույն տեղում, 4 հունվարի 1910։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում։

28 ԳԱԹ արխիվ, Ֆ. Թ. Ադատյան, ր. 12, վ. 9483։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում։

արան հետևելով Դ. Շահլամյանը «Ազատ խոսք»-ը համարում են «ամսագիր», մինչդեռ այն այդպիսին չի եղել, հրատարակվել է «մերթ ընդ մերթ... դիպվածային մեկենասների օժանդակությամբ», ինչպես վկայում է Երվ. Օտյանը[32], «Ազատ խոսք»-ը հիմնադրվել է 1901 թ. օգոստոսին Փարիզում, որտեղ և լույս են տեսել նրա առաջին երեք «տետրերը», յուրաքանչյուրը 16 էջ (12×19 սմ.)։ Տպարան՝ «Հայկական»։ 1902 թ. սեպտեմբերին «Ազատ խոսք»-ը տեղափոխվել է Ալեքսանդրիա, տպագրվել է սկզբում «Արաքս» (Արամ Ստեփանյան), ապա «Գամբետտա» տպարանում։ 1902 թ. լույս են տեսել նրա 5—9 տետրերը, 1903 թ.՝ 10-րդը, 1906 թ.՝ 11—13-րդը, որով և փակվել է նրա հին շրջանը։ Նոր շրջանում «Ազատ խոսք»-ը վերածվել է երգիծական շաբաթաթերթի, նախկին ծավալով։ 1906 թ. լույս են տեսել նրա առաջին և երկրորդ հատորները, առաջինում ընդգրկված են 1—20, երկրորդում՝ 21—32 տետրերը։ 1907 թ. լույս է տեսել նրա երրորդ հատորը (33—39 տետրերը)։ Այնուհետև «Ազատ խոսք»-ի հրատարակությունը կազում է, դժվարությամբ լույս է ընծայվում նրա չորրորդ հատորը։ 1908 թ. հրատարակվում են նրա վերջին երեք տետրերը։ Նոր շրջանի բոլոր տետրերը տպագրված են Ռ. Նազարեթյանի տպարանում։

• Ակտեմիս։ Ամսահանդես ընտանեկան և գրական։ Օրգան քսաներորդ դարի հայ կանանց։ Կահիրե, 1902—1903 թթ.։ Հիմնադիր, տեր և տնօրեն-խմբագիր՝ Մաոի Պեյլերյան։ Տպագրվում էր սեփական համանուն տպարանում։ Ծավալը՝ 32, երբեմն էլ 48 էջ (26×17 սմ.)։ Հովհ. Պետրոսյանը Մաոի Պեյլերյանին շփոթել է ֆրանսահայ գրող Մարի Սվաճյանի հետ, նրան վերագրել վերջինիս ստեղծագործությունները և... Փարիզ տեղափոխել «Արտեմիս»-ը։

• Ժողովուրդ։ Ամսաթերթ բննասիրական։ Կահիրե, 1903—1904 թթ.։ Առաջին տարեշրջանում՝ 1903 թ. հունվարից մինչև դեկտեմբեր լույս է տեսել 12 համար, ծավալը՝ 16, երբեմն էլ 20 էջ (26×17 սմ.))։ 1904 թ. հունվարից «Ժողովուրդ»-ը վերածվել է շաբաթաթերթի, լույս է տեսել 22 համար, նախկին ծավալով։ Առաջին տարեշրջանի խմբագիր՝ Ա. Պալյան, երկրորդինը՝ Վ. Պալյան։ Առաջին չորս համարները տպագրվել են Ալեքսանդրիայի «Արաքս», իսկ մնացյալները՝ Կահիրեի «Արարատ» տպարանում։

• Ազատ բեմ։ Գրական, ազգային և քաղաքական շաբաթաթերթ, որը հիմնադրվել է 1903 թ. ապրիլի 18-ին Ալեքսանդրիայում։ Խմբագիր-տնօրեն՝ Երվ. Օտյան, խմբագրությանը մասնակցել են նաև Վահան Տիտանյանը (Թեքեյանը), Մ. Կյուրջյանը, Լևոն Արամյանը և ուրիշներ։ Տպարան՝ «Արաքս»։ Ծավալը՝ 4 էջ (47×32 սմ.), իսկ երրորդ տարվա 34-րդ համարից՝ 1905 թ. դեկտեմբերի 9-ից, մեծացրած չափսերով։ 1906 թ. ապրիլի 21-ին «Ազատ բեմ»-ը փոխանցվում է Վերակազմյալ հնչակյաններին (Բարսեղ Օհանյան, Օննիկ Թաշչյան և Լևոն Լարենց), որոնք այն տեղափոխում են Կահիրե և վերածում եռօրյա լրագրի։ Տպարան՝ «Կիլիկիա»։ Դադարել է 1907 թ.։

• Լուսաբեր։ Ազգային, քաղաքական, տնտեսական և գրական եռօրյա լրագիր։ Կահիրե, 1904—1908 թթ.։ Խմբագիր՝ Վահան Քյուրջյան, շուրջ մի տարի էլ Արփիար Արփիարյանը։ Առաջին համարը լույս է տեսել 1904 թ. դեկտեմբերի 1-ին։ Ծավալը՝ 4 էջ (50×30 սմ.)։ Տպագրվում էր սեփական տպարանում։

• Օրենք։ Շաբաթաթերթ։ Ալեքսանդրիա, 1905 թ.։ Խմբագրական մարմին՝ Երվ. Օտյան, Վահան Տիտանյան (Թեքեյան) և Միհրան Տամատյան։ «Օրենք»-ը լույս է տեսել ընդամենը 13 համար, ծավալը՝ 4 էջ (29×23 սմ.)։ Տպագրվում էր «Վահան Թեքեյան և Ընկ.» տպարանում։ Բաժանվում էր ձրի։ Վահան Զարդարյանը «Օրենք»-ը համարում է «օրենսգիտական թերթ մը», մինչդեռ այն այդպիսի թերթում չի ունեցել, եղել է Ազգ. սահմանադրության կողմնակիցների պայքարի օրգանը։

Թերթիկ[33]։ Օրաթերթ։ Ալեքսանդրիա, 1906 թ.։ Խմբագիր՝ Երվանդ Օտյան։ «Թերթիկ»-ի առա-

32 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 371։

33 «Հանդես ամսօրյա», 1907, էջ 127։ «Թերթիկ»-ի մասին Երվ. Օտյանը գրում է. «Թերթիկը» բնականաբար դրամագլուխ չուներ. հրատարակության հոգը վրան առած էր փորագրիչ տպարանատեր պ. Գր. Նազարեթյան, խմբագրապետը ես էի, իսկ թերթին վարիչը պ. Երվանդ Անդրեասյան...։ Ջմոռնամ ըսելու որ մեկ քանի անձեր նյութական օժանդակության մը անորոշ խոստումը ըրին մեզի, այս հրատարակության առաջին քայլերը դյուրացնելու համար։ «Թերթիկ»... անընդհատարար շարունակվեցավ չորս շաբաթ, բայց տեսանք որ կարելի չէր շարունակել անպատիժ կերպով այս հրատարակությունը, որ մեզ չարաչար հոգնեցնելե զատ կսպառնար նաև ի վերջո պարտքի տակ խեղդել» (Երվ. Օտյան. Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 372—373)։

ջին համարը լույս է տեսել հուլիսի 11-ին, իսկ վերջինը՝ օգոստոսի 17-ին, ընդամենը 28 համար։ Ծավալը՝ սկզբում 2, ապա 4 «փոքրադիր» էջ։ Հրատարակիչ՝ Գ. Նազարեթյան։ Տպարան «Արաքս»։

• Արև։ Օրաթերթ։ Ալեքսանդրիա. 1908 թ.։ Խմբագիր՝ Երվանդ Օտյան. հրատարակիչ՝ Ռ. Նազարեթյան։ Ծավալը՝ 4 էջ (50×44 սմ.)։ Հովհ. Պետրոսյանի, Գ. Շահլամյանի և ուրիշների ասելով «Արև»-ը հիմնադրվել է 1907 թ., մինչդեռ նրա առաջին համարը լույս է տեսել 1908 թ. մայիսի 11-ին և շարունակվել մինչև նույն թվականի հուլիսի վերջը կամ օգոստոսի սկիզբը։ «Արև»-ը իր 22-րդ համարից փոխանցվել է «Եգիպտոսի հայոց հրատարակչական ընկերությանը», իսկ 91-րդ համարից հետո միացվել է «Լուսաբերին», առաջացնելով մի նոր օրգան՝ «Լուսաբեր-Արև»-ը։

• Լուսաբեր-Արև։ Ազգային և քաղաքական երկօրյա լրագիր։ Կահիրե, 1908—1913 թթ.։ Առաջին շրջանում՝ 1908 թ. մինչև 1912 թ. նոյեմբերը, խմբագիր-արտոնատեր՝ Վահան Քյուրքչյան, գործակցությամբ Լևոն Մկրտչյանի։ Երկրորդ շրջանում՝ մինչև 1913 թ. սկզբները, խմբագիր՝ Սուրեն Պարթևյան, տեր և տնօրեն՝ Արմենակ Մեռթեմետյան։ Ծավալը՝ 4 էջ (50×34 սմ.)։ «Լուսաբեր-Արև»-ը տպագրվում էր սեփական տպարանում։ 1913 թ. մարտին լույս է տեսել այդ լրագրի վերջին (42-րդ) համարը, «Լուսաբեր»-ը և «Արև»-ը բաժանվել են։ Մինչ առաջինը «Հուսաբեր» վերանվանվելով շարունակել է հրատարակվել, երկրորդը՝ ժամանակավորապես դադարել է։ Համարյա բոլոր ցուցակներում այդ լրագրերի միացման և բաժանման տարեթվերի վերաբերյալ տեղ են գտել անճշտություններ։ Հովհ. Պետրոսյանը և ուրիշներ նրանց բաժանումը, ինչպես նաև «Հուսաբեր»-ի սկզբնավորումը դնում են 1912 թ. վերջերին։ Բացի այդ, Պետրոսյանը սխալվում է նաև, երբ «Լուսաբեր-Արև»-ը համարում է «Դաշնակցության թերթ»։ Հանրահայտ իրողություն է, որ Վ. Քյուրքչյանը և Լ. Մկրտչյանը եղել են հակադաշնակցական մտավորականներ։

• Հուսաբեր։ Նախ երկօրյա, ապա ազգային, քաղաքական, տնտեսական և գրական օրաթերթ։ Կահիրե։ 1915 թ. մարտի 1-ին «Հուսաբեր»-ը, փոխանցվելով դաշնակցական Ավետիք Լալայանցին (Մանթաշյան նավթային հիմնարկության Կահիրեի տնօրենը), վերածվել է դաշնակցության «անպաշտոն» օրգանի և որպես այդպիսին հրատարակվել է մինչև 1922 թ. վերջերը։ 1923 թ. մինչև այսօր «Հուսաբեր»-ը այդ կուսակցության «պաշտոնական» օրգանն է։ 1915—1917 թթ. «Հուսաբեր»-ը հրատարակվում էր Արտավազդ Հանրմյանի, իսկ 1917—1922 թթ.՝ Ստեփան Նսայանի կողմից։ Տարբեր ժամանակներում «Հուսաբեր»-ը խմբագրել են Վ. Նավասարդյանը, Լ. Նազարյանցը, Գ. Մխիթարյանը, Գ. Լապյանը, Բ. Թաշյանը և ուրիշներ։ Արտոնատեր՝ սկզբում Հ. Ամիրյան, 1928 թ. կեսերից՝ Օ. Մահաոյան։ Մինչև 1926 թ. «Հուսաբեր»-ը եղել է երկօրյա լրագիր, ծավալը՝ 4 էջ (50×33 սմ. 57×41 սմ)։ 1926 թ. ապրիլի 1-ից մինչև այսօր «Հուսաբեր»-ը օրաթերթ է, սկզբում փոքրածավալ, իսկ հետագայում մեծածավալ (62×45 սմ)։ Տպագրվում է սեփական համանուն տպարանում։

• Արև։ Երկօրյա լրագիր («Ազգային շահերու պաշտպան օրգան»)։ Ալեքսանդրիա։ Առաջին համարը (վերահրատարակության) լույս է տեսել 1915 թ. մայիսի 11-ին։ 1922 թ. դեկտեմբերի 11-ից ազգային, գրական և քաղաքական օրաթերթ («Պաշտոնաթերթ Ռամկավար ազատական կուսակցության Եգիպտոսի շրջանակին»)։ 1924 թ. օգոստոսի 9-ից տեղափոխվել է Կահիրե, որտեղ և հրատարակվում է մինչև այսօր։ Խմբագիր՝ Վահան Թեքեյան, ապա՝ Միքայել Կյուրջյան, հետագայում Հովհ. Պողոսյան և ուրիշներ։ Արտոնատեր՝ Լևոն Մկրտչյան, 1923 թ.՝ Հակոբ Փափազյան, 1924 թվականից՝ Տիգրան Հաճրնլյան և ուրիշներ։ Ծավալը՝ 4 էջ (58×45 սմ, 60×45 սմ)։ Տպագրվում է սեփական համանուն տպարանում։

• Եգիպտահայ տարեցույց։ Վ. Զարդարյանի և Դ. Շահլամյանի ցուցակներում տարբեր գլուխների տակ են զետեղված Սուրեն Պարթևյանի, Մարտիրոս Ոսկյանի և Լևոն Աճեմյանի «Եգիպտահայ տարեցույցներ»-ը, մինչդեռ դրանք հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը։ Ոսկյանը գրում է. «Դիմեցինք «Եգիպտահայ տարեցույց»-ի հարգելի հեղինակին անոր թույլտվությունն ստանալու մեր հրատարակելիք համանուն գործին համար, որը պիտի բլլա իրենին մեկ ուղղակի շարունակությունը»[34]։ Ս. Պար-

34 «Եգիպտահայ տարեցույց», 1919, էջ 3։ Ոսկյանի դիմումին Ս. Պարթևյանը պատասխանել է հետևյալ դիպուկ երկտողով. «Թույլտվություն կխնդրես ինձմե «Եգիպտահայ տարեցույցը» այս տարի որդեգրելու, քանի որ ուրիշ զբաղումներ զիս կարգիլեն անով շահագրգռվելե։ Գիտես արդեն թե «Տարեցույցը» սրտիս որքան քիչ մոտիկ հոգեզավակ մը եղած է ինծի, իր ապերախտ խորթ հայրը, որուն համար ճղակտոր եղած, հոգին բերանը եկած է, խեղճը։ Այս անգամ դուն տիրություն ընել

Թևյանն ընդառաջել է նրան։ Ոսկյանի Տարեցույցը լույս է տեսել 1919 թ. Ալեքսանդրիայում։ Ծավալը՝ 132 էջ (19×13 սմ)։ Տպարան՝ Արամ Ստեփանյան։ Տարեցույցի առաջին համարը հրատարակելուց հետո Ոսկյանը զոհվել է Ադանայում։ Այնուհետև «Եգիպտահայ տարեցույց»-ի հրատարակությունը շարունակել է Լևոն Ահեմյանը։ Պարթևյանի (1914—1918 թթ.), Ոսկյանի (1919 թ.) և Ահեմյանի (1925—1926 թթ.) «Տարեցույց»-ները պետք է համարել մեկ, ոչ թե երեք անուն պարբերական, ինչպես վարվել են վերոհիշյալ ուսումնասիրողները։

• Հայկական սինեմա։ Պատկերազարդ երգիծաթերթ, շաբաթական։ Կահիրե, 1925—1926 թթ.։ Արտոնատեր՝ Ալ. Սարուխան, խմբագիր՝ Վարդան Ջաղարյան։ Առաջին տարեշրջանը սկսվել է 1925 թ. հունվարի 24-ին և վերջացել դեկտեմբերի 26-ին (№ 1—39)։ Երկրորդ և վերջին տարեշրջանում ընդամենը լույս է տեսել 11 համար (№ 40—50)։ Ծավալը՝ 8 էջ (32×24 սմ)։ Տպագրվում էր նախ «Փարոս», ապա «Հուսարեր» և վերջում «Արև» տպարանում։

• Հայ դպրոց։ Հրատարակություն Հայ ուսուցչական միության, Կահիրե։ Հիմնադրվել է 1933 թ.։ Մինչև 1935 թ. լույս են տեսել առաջին հատորի 10 պրակները։ Խմբագրի անուն չի նշված, հավանաբար խմբագրվել է Հայ ուսուցչական միության վարչության կողմից։ Ծավալը՝ 48 էջ (22×15 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Մի քանի տարի դադարելուց հետո 1938 թ. վերստին սկսում է լույս տեսնել մեծացրած ծավալով, 80 էջ (24×16)։ Տպարան՝ Հ. Փափազյան։ Հովհ. Պետրոսյանը և սրան հետևելով Դ. Շահլամյանը վերահրատարակվող «Հայ դպրոց»-ը թյուրիմացաբար համարել են նոր պարբերական և ներկայացրել առանձին գլխի տակ, մինչդեռ այն հանդիսանում է առաջինի շարունակությունը։

• Ազատ միտք։ Շաբաթաթերթ քաղաքական, գրական, տնտեսական։ Կահիրե, 1936—1937 թթ.։ Խմբագրապետ՝ Ա. Ալպոյաջյան, արտոնատեր՝ Ս. Հերյան։ 11-րդ համարից արտոնատեր-խմբագրապետ՝ Ա. Ալպոյաջյան, իսկ 23-րդ համարից խմբագրապետներ՝ Ղ. Սարբյան և Ա. Ալպոյաջյան։ Շահլամյանի ասելով «Ազատ միտք»-ը հիմնադրվել է 1935 թ., որը ճիշտ չէ։ Ծավալը՝ 8 էջ (40—×27 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

• Դրասեր առաջնորդ։ Հրատարակություն Մտավորական սպասարկության դրասենյակի, Կահիրե։ Լույս է տեսել 1938-ից, տետր առ տետր, ծավալը՝ 16 էջ (22×15 սմ)։ Տպարան՝ «Սեվան»։ Բաժանվում էր ձրի։ Ըստ Դ. Շահլամյանի «Դրասերի առաջնորդ»-ի հրատարակիչը Ա. Ալպոյաջյանն էր։ Դուցե։ Բայց պարբերականում այդպիսի նշում չկա։

• Սողակար։ Հրատարակություն Կահիրեի հայ ուսանողական միության։ Հրատարակվում էր պրակ առ պրակ, հիմնականում հայերեն և մասամբ ֆրանսերեն։ Ամբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (22×15 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Պրակները թվական չեն կրում։ Ամենայն հավանականությամբ լույս է տեսել 1938—1939 թթ.։

• Ջահակիր։ Շաբաթաթերթ ավանդապահ, համադրական և բնաշրջական հառաջադիմության քաղաքական, գրական և ընկերային։ Կահիրե։ Արտոնատեր-խմբագիր՝ Հայկ Ժամկոչյան, գրական-խմբագիր՝ Արշամ Տատրյան։ Առաջին համարը լույս է տեսել 1948 թ. մայիսի 5-ին։ Առաջին տարեշրջանը փակվել է 1949 թ. հուլիսի 18-ին (24 համար), երկրորդ տարեշրջանը՝ 1950 թ. նոյեմբերի 20-ին (14 համար)։ Մինչև 1954 թ. հունվարի 15-ը լույս են տեսել ևս 17 համարներ։ Ծավալը՝ 8 էջ (45×30 սմ)։ Այնուհետև «Ջահակիր»-ը վերածվել է ամսաթերթի։ Արտոնատերը նույնն է։ Պատասխանատու տնօրեն և խմբագիր՝ Հրանդ Տատրյան։ Ծավալը՝ 8 էջ (29×22 սմ)։ Հրատարակվում էր զգալի հապաղումներով։ «Ջահակիր»-ո սկզբում տպագրվում էր «Նուպար», ապա «Արդելուհման» և վերջում՝ «Սահակ-Մեսրոպ» տպարանում։ Որոշ դադարից հետո «Ջահակիր»-ը փոխանցվեց Սարգիս Պալայանին, որը շարունակում է այն լույս ընծայել փոփոխված ուղղությամբ։

Արդ, քանի՞ անուն հայ պարբերականներ են լույս տեսել 1865—1965 թթ. Եգիպտոսում։ Դ. Շահլամյանի ասելով իր կազմած ցուցակից (96 անուն) կարող են միայն առանձին «վրիպածներ» լինել, այսինքն հազիվ հարյուր կամ քիչ ավելի է նրանց թիվը։ Դա, ինարկե, ընդունելի չէ։ Մեր կարծիքով, եգիպտահայերը լույս են ընծայել ավելի քան 150, գուցե և շատ ավելի պարբերականներ։ Ստորև տալիս ենք Դ. Շահլամյանի ցուցակից դուրս մնացած չուրջ 30 անուն լրագրերի, հանդեսների, տարեցույցների և այլ պարբերական հրատարակությունների մի լրացուցիչ ցանկ։

կփորձվիս անոր։ Բարի հաջողություն։ Կմաղթեմ սրտագին որ ավելի երախտաճանաչ ըլլալու դրական պատճառներ ձեռք բերես իրմե, առանց զիս բոլորովին մոռցնելու, խոտելի դարձնելու իրենց» (նույն տեղում)։

• Ալպում: Պատկերազարդ տարեգիրք։ Հրատարակիչ՝ Գրիգոր Գալֆա։ Կահիրե, 1932 թ.։ Ծավալը՝ 22 գեղատիպ էջ (48×33 սմ)։

• Ամենուն Գիրքը: Կրոնա-բարոյական ժողովածու։ Ալեքսանդրիա. 1937 թ.։ Լույս էր տեսնում պրակ առ պրակ։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (22×16 սմ)։ Տպարան՝ Արամ Ստեփանյան։ Առաջին պրակի առաջնորդողում ասված է, որ հրատարակության նպատակն է հայ երիտասարդությանը դաստիարակել քրիստոնեական-ազգային ոգով։

Իարի լուր: Գիրք հոգեշահ հոդվածներու։ Ալեքսանդրիա, 1948—1950 թթ.։

Գրասեր: Կիսամսյա հանդես, խմբագրատիպ։ Ալեքսանդրիա. 1904 թ.։ Հրատարակություն Գրասիրաց միության։ Լույս է տեսել «անընթեռնելի ձեռագիր տպագրությամբ» 12 համար, հետագայում նաև մի համար տպագիր՝ իրրև «տասնօրյա գրական հանդես»։ Ընդամենը 13 համար։ Խմբագիրն անհայտ է։

Գրպանի օրացույց: Հրատարակություն «Արաքս» մատենաշարի։ Ալեքսանդրիա, 1941 թ. և հաջորդ տարիներ։ Տպարան՝ Արամ Ստեփանյան։

Եգիպտահայ տարեցույց: Ալեքսանդրիա, 1912 թ.: Տպարան՝ «Արաքս» (Արամ Ստեփանյան)։

• Լույս: Պարբերագիրք հոգեշահ հոդվածներու։ Կահիրե, 1936 թ.։ Կազմեցին Թեոդոր Ե. Տաղլյան և Կիրակոս Հ. Թումայան։ Նյութերի կեսը հայատառ թուրքերեն։ Ծավալը՝ 20 էջ (20×14 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

Խաուլկ: Հրատարակություն Պերպերյան դպրոցի սաների։ Կահիրե, հավանարար 1930—1931 թթ. (խմբագրատիպ)։ Լույս են տեսել № 1—23։

• Հայահամար Եգիպտոսի և Սուդանի: [Տարեգիրք]։ Կահիրե, 1939 թ.։ Հավաքեց և դասավորեց՝ Մ. Բաշչյան։ Լույս է տեսել միայն մի համար, ծավալը՝ 195 էջ (15×20 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

Հայելի: Երգիծաթերթ։ Կահիրե, 1915 թ.։ Հրատարակիչ-խմբագիրներ Միհրան Տամատյան և Գ. Բագրատունի [Ա. Ամատունի]։

Հայտագիր: Ազգային պարբերագիրք։ Կահիրե, հավանարար 1926—1928 թթ.։ Հրատարակիչ-խմբագիր՝ Պաղտասար Նաթանյան։ Ըստ Վ. Չարդարյանի «Հայտագիրը»-ը լույս է տեսել «5 թիվ»։

• Նշույլներ: Գրական հավաքածու։ Կահիրե, 1916 թ.։ Հրատարակություն Կահիրեի հայ երիտասարդաց միության։ Ծավալը՝ 32 էջ (14×20 սմ)։ Տպարան՝ «Ոստան» (Սոկրատ Սարրաֆյան և ընկ.)։

• Նոյյան աղավնի: Հայ մարդն ու իր մշակույթը, պարբերագիրք։ Կահիրե, 1950—1951 թ.թ.։ Հրատարակիչ՝ Արշամ Տատրյան։ Լույս են տեսել 1, 2 և 3 համարները։ Ծավալը՝ 80 էջ (24×17 սմ)։ Տպարան՝ «Նուպար»։

Ոմանց տարեցույցը հայ դավեշտական տարվա։ Ալեքսանդրիա, 1909 թ.։ Հեղինակ Երոտ (Երվանդ Օտյան)։ Ծավալը՝ 16 էջ (12×13 սմ)։

• Ոսկեմատյան Հ. Բ. Ը. Միության։ Պատկերազարդ վեցամյա։ Կահիրե։ Առաջին հատորը (1906—1913 թթ.) լույս է տեսել 1914 թ., երկրորդ հատորը՝ (1913—1919 թթ.) 1919 թ. և հաջորդաբար։ Երկրորդ հատորի ծավալը՝ 71 էջ (16×21 սմ)։ Տպարան՝ Հ. Բ. Ը. Միության, Կահիրե։

Պիծակ: Զավեշտական շարաթաթերթ։ Կահիրե, 1906 թ.։ Խմբագիր՝ Սիսակ Մուրատյան։ Ըստ Չարդարյանի լույս է տեսել միայն մեկ համար։

• Ջահակիր: Գրական հավաքածու։ Խմբագիր՝ Վարդան Գևորգյան։ Կահիրե, 1919 թ.։ Ծավալը՝ 134 էջ (16×24 սմ)։ Տպարան՝ Գրիգոր Ճիհանյան։

• Սարկավագին Եգիպտահայ տարեցույցը: Ալեքսանդրիա. 1928—1951 թթ.։ Հրատարակիչ-խմբագիր՝ Հարություն Մանավյան։ Հիմնադրվել է 1921 թ. Պոլսում։ Ծավալը եղել է փոփոխական, երբեմն 118, 150, երբեմն էլ՝ 224 էջ (17×23 սմ)։ Տպարան՝ Ա. Ստեփանյան։

Վահագն: Ձեռագիր թերթ։ 1928 թ.։ Հավանարար Ալեքսանդրիայում։

• Տեղեկատու պրակ Գալուստյան շրջանավարտից միության, Կահիրե, 1945 թ. և հաջորդ տարիներ։ Ծավալը՝ 16 էջ (21×14 սմ)։ Տպարան՝ «Նուպար»։

• Տեղեկատվություն հայ ազգային խորհուրդի Աղեքսանդրիոյ։ Հրատարակություն Եգիպտոսի հայ ազգային խորհրդի։ Ալեքսանդրիա, 1946 թ։ Լույս են տեսել երկու պրակներ։ Ծավալը՝ 24 էջ (20×27 սմ)։ Տպարան՝ Ա. Ստեփանյան։

Եգիպտահայերը ստեղծել են նաև մի շարք հայատառ թուրքերեն, թուրքերեն, անգլերեն և ֆրանսերեն պարբերականներ, որոնք նույնչափս տեղ չեն գտել Ռ. Շահլամանի դուցակում։

Մաժակ: Հայատառ թուրքերեն լրագիր։ Կահիրե, 1898 թ.։ Ն. Բասապյանը այն համարում է հայերեն հրատարակություն»», մինչդեռ «Մաժակ»-ը եղել է «տաճկարարբառ», ինչպես նշված է 1898 թվակիր արխիվային մի վավերագրում[36]։ Ե՞րբ է հիմնադրվել «Մաժակ»-ը։ Այդ հարցին բավական պարզ պատասխան է տալիս արխիվային մի ուրիշ վավերագիր (1898 մարտի 22 թվակիր), որտեղ ասված է. «...լրագիրն... ցարդ 2 թիվ ելած է»[37]։ Մինչև նույն թվականի մայիսի 26-ը «Մաժակ»-ը լույս էր տեսել 25 համար[38]։ Այդ հաղորդումներից կարող ենք հետևցնել, որ «Մաժակ»-ը հիմնադրվել է 1898 թ. մարտի կեսերին և եղել է, հավանաբար, եռօրյա լրագիր։

The Egyptian grafic: Կահիրե, 1902 թ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան, հրատարակիչ՝ Գ. Դալֆյան։

The Cairo Weekly: Կահիրե, 1905 թ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան, հրատարակիչ՝ Գ. Գալֆյան։

The Sphinx: Կահիրե, 1913 թ.։ Խմբագիր՝ Ալեքսանդր Պեգիրչյան։

Politique Morale: Հանդես։ Կահիրե, 1867—1868 թթ.։ Խմբագիր՝ Շաոլ Անչալյան։

La Justice: Կահիրե, 1908 թ.։ Խմբագիր և հրատարակիչ՝ Լևոն Ֆեհմի։

La Caravane: Երգիծական պատկերազարդ շաբաթաթերթ, 1938 թ., Կահիրե։ Հրատարակիչ-խմբագիր՝ Ալ. Սարուխան։

Յենի ֆիքր: Թուրքերեն լեզվով ամսագիր։ Կահիրե, 1903 կամ 1904 թթ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան։ Բաժանվում էր ձրի։

Հ. ԽՈՓՈՒՋՅԱՆ

ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Նոյեմբերին Լվովում կայացավ հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված գիտական կոնֆերանս, որը կազմակերպել էին Ուկր. ՍՍՀ Լվովի կենտրոնական պետական պատմական արխիվը, Լվովի Ի. Ֆրանկոյի անվան էներգիի շքանշանակիր պետական համալսարանի հասարակագիտական ինստիտուտը և Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը։

Կոնֆերանսը բացեց Ուկրաինական ՍՍՀ Լվովի կենտրոնական պետական պատմական արխիվի դիրեկտոր Ն. Ֆ. Վրաղին։ Այնուհետև կոնֆերանսի մասնակիցներին ողջունեցին Ուկրաինայի կոմկուսի Լվովի մարզկոմի բաժնի վարիչի տեղակալ Գ. Գ. Պանչենկոն, Լվովի Ի. Ֆրանկոյի անվան համալսարանի հասարակագիտական ինստիտուտի դիրեկտոր Մ. Մ. Ոլեկսյուկը, Ուկրաինական ՍՍՀ Միխաթեների ասվեսին առընթեր Արխիվային վարչության բաժնի պետ Լ. Ա. Գրոցենկոն։ Կոնֆերանսում ընթերցվեց նաև Հայկ. ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, պատմության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի ողջույնի խոսքը։

Կոնֆերանսը քննարկեց երեք զեկուցում և հինգ հաղորդում։ «Լվովի պատմարանների ավանդը ուկրաինա-հայկական պատմական կապերի հետազոտման բնագավառում» թեմայով զեկուցեց Լվովի հասարակագիտական ինստիտուտի Ուկրաինայի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Մ. Կ. Իվասյուտան։ Բազմաթիվ փաստերով նա ցույց տվեց ուկրաինական ժողովրդի և Ուկրաինայի հայ գաղութների բնակչության դարավոր բարեկամությունը և համատեղ պայքարը սոցիալական ու ազգային հեշման դեմ։ Ապա զեկուցողը նշեց, որ Ուկրաինայի պատմարանները հատուկ ուշադրություն են դարձնում հայ-ուկրաինական պատմական կապերի հետազոտմանը, այդ գործում բեղդրկելով շնորհալի և փորձված գիտնականներին (Ուկր. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչ, գիտաշխատողներ Յա. Դ. Իսաևիչ, Վ. Վ. Գրաբովեցկի, Ն. Կ. Կրիմսկոս, Յա. Ռ. Դաշկևիչ, Յա. Պ. Կիս, Ե. Ա. Յացկևիչ, Ս. Տ. Բիլեցկի, Վ. Ս. Կուլչիցկի, Ի. Դ. Կովալչակ և ուրիշներ)։

Լվովի հասարակագիտական ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Յա. Դ. Իսաևիչը զեկուցեց Լվովի մշնագաբյան Ստավրոպիգիայի գրադարանի հրատարակչական գործունեության

---

35 «Պատմա-բանասիրական հանդես», 1961, N 3—4, էջ 327։

36 ԳԱԻ արխիվ, Ֆ. Բ. Ագայան, բ. 12, վ. 9435։

37 Նույն տեղում, վ. 9434։

38 Նույն տեղում, վ. 9441։